ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«12» հունվարի 2022 թվականի N: 14-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐ ՀԱՄԱԿԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 8-րդ հոդվածի 1-ին մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N:1792-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կանոնադրության» 16-րդ կետի «ա» ենթակետի դրույթներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում կառավարության տարածքային քաղաքականության իրագործման համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալներին հանձնարարել համակարգել հետևյալ բնագավառները, գործառույթները և դրանք ապահովող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ Ալբերտ Այվազյանին վերապահել համակարգելու՝

1) գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառները՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության միջոցով,

2) հողօգտագործման բնագավառը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության միջոցով,

3) տնտեսության զարգացման բնագավառը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի միջոցով,

4) տեղական ինքնակառավարման մարմինների հետ իրավական հսկողության աշխատանքների իրականացումը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի միջոցով:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ Կարեն Մանուկյանին վերապահել համակարգելու՝

1) քաղաքաշինության, տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառները՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության միջոցով,

2) մշակույթի, սպորտի և երիտասարդության բնագավառը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի միջոցով,

3) պաշտպանության բնագավառը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի միջոցով,

4) քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառը, ինչպես նաև հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների հետ գործունեությունը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի միջոցով:

Ն.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է